

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 147

Օրդո Սալութիս – Փրկութեան վարդապետութեան վերաբերեալ, Վերակազմ աստուածաբաններ յաճախ խօսում են երեք Լատիներէն արտայայտութիւնների առթիւ՝ «Փաքթում Սալութիս» (փրկութեան դաշնագիր), «Հիսթորիա Սալութիս» (փրկութեան պատմութիւն), եւ «Օրդո Սալութիս» (փրկութեան կարգ): Փաքթում սալութիսով նրանք խօսում են փրկանաւորութեան ուխտի մասին՝ մեղաւոր մարդու փրկութեան համար եղած Հօր, Արդու, եւ Սուրբ Հոգու յաւիտենական ներերրորդութեան հրովարտակն ու համաձայնութիւնը: Հիսթորիա սալութիսով նրանք ակնարկում են փրկութեան պատմութիւնը՝ ընդարձակօրէն նայելով թէ ինչպէս Աստուած փրկեց Իր ժողովրդին պատմութեան մէջ, իսկ աւելի մասնաւորապէս թէ Քրիստոսը իրապէս ինչ կատարեց մէկընդմիջ՝ ժամանակում եւ պատմութեան մէջ, որպէսզի իրագործի Աստուծոյ յաւիտենական հրովարտակը եւ կատարի փրկանաւորութիւն Իր ժողովրդի համար: Եւ վերջապէս օրդո սալութիսով նրանք խօսում են այդ կարգի մասին որով Աստուած մատակարարում է Քրիստոսի փրկութեան գործը անհատներին՝ ժամանակի եւ պատմութեան ընթացքում:

Թէպէտ եկեղեցու պատմութեան ընթացքում եղած աստուածաբաններ նկատի են առել փրկութեան որոշ մասերը՝ տարբեր մանրամասնութիւններով, սակայն փրկութեան կարգի նշանակութիւնը եւ կարգաւորումը Վերակազմ աստուածաբանութեան արդիւնքն է: 17րդ դարուայ Ուէստմինստըր Հաւատոյ Հանգանակը յստակօրէն նշում է այսպէս մի փրկութեան կարգ:

Թէկուզ Աստուածաշունչը չի ներկայացնում եղելութիւնների մի ճշգրիտ կամ լրիւ ցանկ, սակայն այդ յստակօրէն ակնարկում է փրկութեան գործի մատակարարութեան մէջ եղած մի կարգ: Օրինակի համար՝ Յովհաննէս 1:12ում պարզ է թէ հաւատքը որդեգրութիւնից առաջ է. Գործք Առաքելոց 13:48ում տեսնում ենք որ Աստուծոյ եղած մարդկանց կարգումը դէպի յաւիտենական կեանք նախորդում է դրանց հաւատքը. Յովհաննէս 3:3ում տեսնում ենք որ վերածնութիւնը Աստուծոյ թագաւորութեան ներս մտնելուց առաջ է. Ա. Պետրոս 1:23ում Աստուծոյ Խօսքի լսողութիւնը նախորդում է վերածնութիւնը. Եփեսացիս 1:13-14ում կարդում ենք որ աւետիս պատգամի լսելը գալիս է առաջ, ապա դրան հաւատալը, եւ ապա կնքել Սուրբ Հոգովը՝ որն երաշխաւորութիւն է որ մենք կ'ստանանք փառքում մեր կատարեալ փրկանաւորութիւնը. Գաղատացիս 2:16ում տեսնում ենք որ հաւատքը նախորդում է արդարացումը. Հռովմայեցիս 10:8-9ում պարզ է թէ նախ աւետիսն է քարոզում, ապա տեղի է ունենում Քրիստոսի հանդէպ դաւանանք եւ հաւատք, եւ ապա փրկութիւն (արդարացում). Հռովմայեցիս 6:22ում գրւած է թէ մեղքից ազատուած լինելով, մենք հիմա Աստուծոյ ստրուկներն ենք, որ այդ առաջնորդում է մեզ յառաջադիմական սրբարարութեան կեանքի մէջ՝ որի վերջն է յաւիտենական կեանքը. Հռովմայեցիս 5:2ում տեսնում ենք որ Քրիստոսի միջոցով եղած փրկութիւնը ստացում է հաւատքով, որը կ'առաջնորդի մեզ մեր գերագոյն յոյսին՝ որն է յաւիտենական փառաւորումը. Յուդա 1:24ում հաւատացեալները միխթարում են որ Աստուած կ'պահէ եւ կ'պահպանէ նրանց, եւ կ'ներկայացնէ նրանց անբիժ՝ լիովին փառաւորած. Եւ Բ. Թեսաղոնիկեցիս 2:13-14ում տեսնում ենք փրկութեան վարդապետութեան գլխաւոր մասերից որոշը ներկայացւած, իրարու հետ եղած յարաբերութեան մէջ՝ ինչպէս ընտրութիւն, կոչում, հաւատք, սրբարարութիւն եւ փառաւորում:

Թէկուզ փրկութիւնը յաճախ ակնարկում է որպէս մէկ եղելութիւն, սակայն հենց այս համարներից պարզ է թէ փրկութեան ընթացքում կան մի քանի իւրայատուկ մասնակից բաժիններ, եւ թէ գոյութիւն ունի մի տրամաբանական կարգ կամ դասաւորութեան հերթականութիւն այս ընթացքում, որը պիտի ճիշտ հասկացի եւ դրանց պատշաճ կարգը պահպանի:

Ամենամանրամասն հատուածը այսպէս մտադրւած փրկութեան կարգի նկատմամբ Հռովմայեցիս 8:29-30ն է: Թէպէտ այս մի լրիւ կամ կատարեալ ցանկ չի, բայց եւ այնպէս այդ Աստուածաշնչի ամենալայն ցանկն է փրկութեան տարբեր մասերի եւ դրանց փոխարաբերութեան նկատմամբ: Ներկայացւած մասերն են՝ նախագիտութիւն, նախասահմանութիւն, կոչում, արդարացում, եւ փառաւորում: Այս յաճախ կոչում է որպէս փրկութեան ոսկէ շղթան՝ պատկերացնելով մի անխախտելի շղթայ կամ կարգ որով Աստուած փրկում է Իր ժողովրդին: Անցեալի յաւիտենականութիւնից Աստուած ընտրեց եւ նախասահմանեց որոշ մարդկանց փրկութեան համար, եւ նրանց որ Նա նախասահմանեց բոլորն էլ կ'կանչուեն, բոլորն էլ կ'արդարանան եւ ի վերջոյ բոլորն էլ կ'փառաւորուեն: Պօղոսը ասում է թէ փրկութիւնը՝ հենց սկզբից մինչեւ վերջը, դրա յղացումից մինչեւ դրա իրագործումը եւ ապա դրա մատակարարումը, ամբողջովին Աստուծոյ գործն է եւ միայն Աստուծոյ գործը:

Վերակազմ տեսանկիւնից, փրկութեան կարգի աւելի մանրամասն ցանկը սովորաբար նշում է որպէս՝ կոչում, վերածնութիւն, հաւատք եւ ապաշխարութիւն (նաեւ որպէս դարձի գալ), արդարացում, որդեգրութիւն, սրբարարութիւն, յարատեւութիւն, եւ փառաւորութիւն: Սակայն, այդպէս որ նշեց վերը, փրկութեան կարգի ակն ու աղբիւրը Աստուծոյ նախագիտութիւնը ու նախասահմանութիւնն են՝ լինելով Նրա հրովարտակի մասը, հաստատուած անցեալի յաւիտենականութեան մէջ: Նկատի առնելով փրկութիւնը այսպէս տեսանկիւնից, մեծ յստակութիւն եւ ճշգրտութիւն է յառաջացնում փրկութեան վարդապետութեան հասկացողութեան նկատմամբ, եւ գերագոյնօրէն օգնում է մեզի տեսնել թէ այս գործը՝ դրա յղացումից մինչեւ դրա կատարելագործութիւնը, ամբողջութեամբ Աստուծոյ գործն է, որն է «մեր հաւատքի հեղինակն ու կատարողը» (Ա. Կորնթացիս 4:7, Եբրայեցիս 12:2):